Լոռու Մարզ

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«Edition of «LORU MARZ» JSC. *Marzpetaran, 4-rd floor, Haik Square, Vanadzor, Armenia*

Հայաստան, ք.Վանաձոր, Հայքի հրապարակ
Լոռու մարզպետարան, 4-րդ հարկ
☎ (0322) 2-03-20

02.06. 2021 թ.
Թիվ 5

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Պարոն Ասլանյան.

Մեծ է «Ինտերկապ» բարեգործական միության նախագահ Նորայր Զուլոյանի վաստակն իր հայրենի Վանաձոր քաղաքում:

Մինչ բարեգործական միության հիմնադրելը, նա հսկայական դեր է խաղացել քաղաքում ֆուտբոլի զարգացման գործում: Նույնիսկ կազմակերպել է մեր թիմի ընկերական հանդիպումները եվրոպական երկրներում: «Ինտերկապի» գործունեության մասին միայն «Վերածնունդ» և «Լոռու մարզ» թերթերում տպագրված հոդվածները մի քանի ստվարածավալ հատորներ կկազմեն: Եվրոպայից բերված դեղորայքը, բուժսարքավորումները, հագուստը երկրաշարժից հետո երկու տասնամյակ շարունակ անվարձահատույց բաժանվել են ոչ միայն Վանաձորում և հանրապետության այլ քաղաքներում, այլև Արցախում, հատկապես առաջին պատերազմի ժամանակ:

«Ինտերկապին» անվերապահորեն վստահել և վստահում են ոչ միայն մեր երկրում, այլև Գերմանիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Եվրոպական այլ երկրներում:

Նորայր Զուլոյանի վերջին նախաձեռնությունը, որի իրագործումն անհնարին էր թվում, Զորավար Անդրանիկի հուշարձանի համար Հայաստանում և արտասահմանյան բազմաթիվ երկրներում կազմակերպված հանգանակությունն էր: Բոլորին է հայտնի, որ այս նախաձեռնությունը նույնպես հաջողությամբ պսակվեց:

Այսօր էլ Ն. Զուլոյանը բազմաթիվ հայրենանպաստ մտաղացումներ ունի, որոնք հերթով կյանքի է կոչելու իր վայելած համընդհանուր սիրո և հարգանքի շնորհիվ:

Այս տարի լրացավ Ն. Զուլոյանի ծննդյան 70-ամյակը, որն իր խնդրանքով աննկատ անցավ՝ նկատի ունենալով արցախյան վերջին պատերազմից հետո երկրում տիրող իրավիճակը:

Առաջարկում եմ Նորայր Զուլոյանին շնորհել «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Զորավար Անդրանիկի հուշարձանի կառուցման նախաձեռնող խմբի անդամ,
Հայաստանի գրողների միության նախագահության անդամ,
ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքի նախագահ,
«Լոռու մարզ» և «Երկունք» թերթերի գլխավոր խմբագիր, բանաստեղծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
«02» 06 2021 թ
Մտից N 01 Գործ N 7841